

Ակադեմիայի պատմութեան ինստիտուտում քննարկեց ԱՄՆի հայագիտական համակարգը

Ուրբաթ, 8 փետրուար 2002 թին, Հայաստանի Հանրապետութեան Գիտութիւնների ազգային ակադեմիայի պատմութեան ինստիտուտում ելոյթ ունեցաւ Ամերիկայի Միացեալ Նահանգների եւ Միացեալ Թագաւորութեան մէջ աշխատող Կոմիտաս ինստիտուտի տնօրէն եւ այդ ինստիտուտի կողմից հրատարակող Armenian Forum հանդէսի խմբագիր Վինսէնթ Աւագ Լիմայի զեկուցումը՝ «Հայագիտութիւնը ԱՄՆի մէջ» նիւթի մասին: Ստորեւ ներկայացնում ենք նախ՝ Լիմայի ամբողջ զեկուցումը, ապա՝ հարց ու պատասխանների ամփոփումը:

Լիմայի Խօսքը

Յարգելի գործընկերներ,

Շնորհակալ եմ ակադեմիկոս Հրանտ Աւետիսեանին՝ այս հանդիպումը կազմակերպելու համար, եւ ձեր բոլորին՝ ձեր ներկայութեան համար:

1997 թւականի հոկտեմբերին Նիւ Եորքի Columbia համալսարանում տեղի ունեցաւ հանրային մի հանդիպում՝ «Հայագիտութիւնը ԱՄՆի մէջ» նիւթի մասին: Ձեկուցումներով հանդէս եկան նոյն համալսարանի հայագիտական ամբիոնի ղեկավար՝ պրոֆեսոր Մարկ Նշանեանը, Ջօրեան հիմնարկի կողմից հրատարակող Diaspora հանդէսի խմբագրապետ եւ Wesleyan համալսարանի դասախօս՝ պրոֆեսոր Խաչիկ Թէօլեօլեանը, եւ հայագետ պրոֆեսոր Ջորջ Բուրնութեանը, որը Iona College-ի դասախօս է: Նիստի նախագահն էի ես: Այդ հանդիպման ընթացքին քննարկեցինք ԱՄՆում հայագիտութեան առաքելութիւնը, նրա մի շարք դժարութիւնները, եւ դրանց հնարաւոր լուծումները: Քննարկման մասին մանրամասն մի զեկույց լոյս տեսաւ Armenian Forum հանդէսի մէջ եւ այդպիսով լայն անդրադարձ ունեցաւ ԱՄՆի հայագիտական եւ հայագիտութիւնով հետաքրքրող մարդկանց շրջանակներում: Հետաքրքրողները կարող են զեկուզումը իր ամբողջութեան մէջ կարդալ Armenian Forum-ի առաջին համարում, որը յանձնել էմ պատմութեան ինստիտուտի գրադարանին, կամ էլ [Internet-ի վայրում](http://www.gomidas.org/forum):

Պէտք է խոստովանենք, որ այն օրերին չէի մտածում, որ Հայաստանում յատուկ հետաքրքրութիւն գոյութիւն ունենայ այս նիւթի նկատմամբ: Բայց հէնց այդ օրերից ոչ շատ ուշ, հրատարակւում էր Արմէն Այվազեանի հրապարակախօսական աշխատանքը ԱՄՆում Հայաստանի պատմութիւնով զբաղող գիտաշխատողների մասին, եւ այժմ՝ Երեւանի պետական համալսարանի հայոց պատմութեան ամբիոնի բանաձեւը որգեգրուելոց յետոյ, ակնյայտ է, որ այս նիւթը որոշ չափով հետաքրքրում է Հայաստանում աշխատող իմ գործընկերներին: Ուրեմն մտածեցի, քանի որ Հայաստանում եմ լինելու, իմ մտածումները այս նիւթի մասին ներկայացնեն հետաքրքրողներին:

Երեւի արժէ նշել, որ իմ մասնագիտական ուսումը ստացել եմ Ann Arbor քաղաքում, Michigan-ի համալսարանում, պրոֆեսոր Ռոնալդ Սիւնիի մօտ: Թէեւ հիմա մի տարուց աւել է, որ չի ստացել որ իրար հետ զրուցենք, ու թէեւ որոշ հարցերում ունենք սուր տարակարծութիւններ, մեր յարաբերութիւնը մնում է ջերմ ու յարգալի: 1989 թւից եղայ Հայ յեղափոխական դաշնակցութեան բիւրոյի կողմից հրատարակող Armenian Review գիտական հանդէսի փոխխմբագիր եւ քանի որ հանդէսը լիաժամ խմբագրի կարիքն ունէր, ուսումս անաւարտ թողնելով, 1991 թւին ստանձնեցի այդ պատասխանատւութիւնը: Գտնելով, որ ԱՄՆում հայագիտութիւնը լուրջ բայց յաղթահարելի թերութիւններ ունի, 1996 թւին, պատմաբան Արա Սարաֆեանի եւ մի-երկու ուրիշների հետ կազմեցինք հայագիտական Կոմիտաս ինստիտուտը: Արայի հետ միասին, ինստիտուտի հարկի տակ սկսեցինք հրատարակել ժամանակակից հարցերով զբաղող Armenian Forum հանդէսը: Կոմիտաս ինստիտուտի եւ Armenian Forum-ի մասին աւելին կասեմ մի քիչ յետոյ: Այսքանը իմ ո՛վ լինելու մասին:

Ձեզ յայտնի է արեւմուտքում հայագիտութեան անցեալը եւ հայերէն լեզւի ու հայերէնով գրած սկզբաղբիրների անելի լայն գիտական ասպարեզների համար օգտակարութեան հետ կապած գիտական գործունեութիւնը: Ամերկահայութիւնը սկսեց հետաքրքրել հայագիտութիւնով քսաներորդ դարի կեսերին, եւ վերջին տասնամեակների ընթացքին շարունակաբար ներդրում է կատարել այդ ճիւղի կազմաւորման ու ամրապնդման համար:

Այս հետաքրքրութիւնն ու ներդրումները կապած էին ու դեռ կապած են երեք երեւոյթի հետ:

Առաջինը հոգեբանական մի երեւոյթ է, որ երեւի բխում է ամերիկայում չնչին փոքրամասնութիւն լինելուց, բայց գուցէ անելի տարածւած է. կայ հայութիւնը բոլորին ծանօթացնելու ցանկութիւն: Ուրեմն, ինչպէս Սարկ. Նշանեանն է ասում, մենք մեր ծախսով մեզ դնում ենք ցուցահանդէսի: «Տեսէ՛ք», ասում է հայը, «մենք ձեզանից պակաս չենք. մենք մեծ երկիր ենք ունեցել. մենք աշխարհի առաջին քրիստոնէայ ժողովուրդն ենք եղել. մենք ոսկեդար ենք ունեցել. մենք աշխարհի քաղաքակրթութեան մեր ոչ-աննշան ընծան ենք տւել:» Այսպէս բաներ: Եւ համոզոււմ է ամերիկահայը այս ամենը հաստատագրելու եւ տարածելու համար ԱՄՆի elite համալսարաններում հայագիտական ամբիոններ կազմել: Ի հարկէ, կեանքը դաժան է, եւ elite համալսարանում ամբիոնի տէրը կարող է եւ գտնել ու յայտարարել թէ ո՛չ, Հայաստանը առաջին երկիրը չէր, որի պետերը ժողովրդին պարտադրեցին քրիստոնէութիւնը: Այս վերջին երեւոյթին կանդրադառնան մի քիչ յետոյ:

Երկրորդ ազդակը, որին կապած է ամիկահայութեան շահագործւածութիւնը հայագիտութեան հանդէպ, հայապահպանման գործն է: Հայագիտական ամբիոնները եւ դրանց հետ միասին՝ մի շարք collegeներում հաստատւած ծրագիրներ, հայերէն լեզւի ու պատմութեան ու գրականութեան դասընթացներ են մատուցանում, մասնաւորապէս հայ երիտասարդների համար:

Երրորդ ազդակը քաղաքականն է: Մանաւանդ ցեղասպանութեան հերքումը Թուրքիայի կառավարութեան եւ նրա ներկայացուցիչների կողմից սփիւռքին մղեց դիմելու ակադեմականներին, որպէսզի ճշմարտութիւնը յաղթահարի դրամին ու բիրտ ուժին: Այսպիսով կազմւեցին մի շարք ամբիոններ եւս. վերջինը Clark համալսարանում երկու ամիս առաջ: Կազմւեցին նաեւ ինստիտուտներ, ինչպիսին են Ջօրեան հիմնարկը եւ Armenian Assemblyին կապւած Armenian National Instituteը:

Այստեղ թոյլ տւեք երկու խօսք ասել ԱՄՆում պատմագիտական կեանքի կազմակերպման մասին: Անհատը փիլիսոփայութեան դոկտորի կոչւումը, ինչը Հայաստանում կոչւում է թեկնածութիւն, ստանալուց յետոյ, ունի աշխատանքի մի քանի հնարաւոր ուղիներ:

Թիւ 1.- մնայուն պաշտօնի ակնկալութիւնով աշխատանքի կոչւել մեծ համալսարանում, եւ այնտեղ զբաղւել հիմնականում գիտական աշխատանքով ու ասպիրանտների աշխատանքը հսկելով բայց նաեւ ուսանողներին որոշ չափով դասախօսելով:

Թիւ 2.- մնայուն պաշտօնի ակնկալութիւնով աշխատանքի կոչւել collegում, եւ այնտեղ զբաղւել հիմնականում ուսանողներին դասախօսելով բայց նաեւ որոշ չափով գիտական աշխատանքով:

Թիւ 3.- առանց մնայուն աշխատանքի ակնկալութեան աշխատանքի կոչւել մեծ համալսարանում կամ collegում եւ այնտեղ զբաղւել ուսանողներին դասախօսելով:

Թիւ 4.- աշխատել անկախ գիտական ինստիտուտում:

Թիւ 5.- զանազան. օրինակի համար ստանալ նպաստ՝ անկախ գիտաշխատանքի համար:

Մնայուն պաշտօնի (անգլերէնով՝ tenure) առանձնայատկութիւնն այն է, որ համալսարանը քրեական յանցանքի կամ նման պարագայից բացի ոչ մէկ

պատճառով չի կարող ենթակային գործից ազատել: Այդպիսով ապահովվում է գիտաշխատողի խօսքի կատարեալ ազատութիւնը: Ի գուր չէ, որ համալսարանը միշտ եղել է ընդհանրաբան կենտրոն եւ պետական գործունէութեան սուր քննադատութեան տեղը:

Մնայուն պաշտօն ունեցողի վրայ միակ ճնշման կէտը ռոճիկի յաւելման հարցն է, որը կապւած է շարունակաբար յօդւած եւ գիրք հրատարակելու հետ:

Պէտք է յիշել, որ առանց հայագիտական յատուկ ամբիոնների էլ համալսարանները հերթական կարգով աշխատանքի են հրաւիրում հայոց պատմութեան կամ լեզուի կամ գրականութեան մասնագէտներին: Այսպէս, օրինակ, Նինա Գարսոյեանը արդէն ոչ միայն մնայուն պաշտօնով փրոֆեսոր էր, այլեւ եղել էր Princeton համալսարանի ասպիրանտուրայի ընդհանուր վարիչը, դեկանտը, երբ ֆինանսաւորւեց ու կազմւեց իր մինչեւ վերջերս հանգստեան կոչւելը զբաղեցրած Columbia համալսարանի հայագիտական ամբիոնը: Ռիչարդ Յովհաննիսեանը, Ռոնալդ Սիւնիմ, եւ ուրիշներ նոյնպէս ունէին մնայուն պաշտօններ ամբիոնների կազմութիւնից առաջ:

Ուրեմն ինչու՞ կազմել յատուկ ամբիոններ: Հայագիտական ամբիոնների ֆինանսաւորումը նպատակ ունէր նախ՝ այդ անձնաւորութիւններին որոշ յաւելեալ հնարաւորութիւններ տալու (օրինակի համար գիտաժողով կազմակերպելու հնարաւորութիւն, անձամբ արխիւ գնալու կամ ասպիրանտի արխիւ գնալու հնարաւորութիւնը). երկրորդ՝ ապահովել որ այդ անձնաւորութեան հանգստեան կոչւելուց յետոյ տասնամեակներ ու դարեր շարունակ տւեալ համալսարանում հայագէտներ աշխատանքի կը հրաւիրւեն:

Այս ամենը շատ բարի է եւ նպաստել է հայագիտութեան բարգաւաճմանը: Ամբիոնի տէրերը ընդհանրապէս վարել են գիտական բեղուն աշխատանք. թէւ որոշները ոչ մի ասպիրանտ չեն պատրաստել, ուրիշները կազմել են հայագէտների մէկ կամ երկու նոր սերունդ: Բացառիկ գործունեայ է եղել Ռիչարդ Յովհաննիսեանը, որը թէ՛ իր նեղ մասնագիտութեան մէջ գիրք է գրել, թէ՛ մի քանի ասպիրանտների գործն է ղեկավարել, եւ թէ՛ մեծ թւով գիտաժողովներ է կազմակերպել եւ դրանցից բխող հատորներ է խմբագրել: Ի հարկէ Պրոֆեսոր Յովհաննիսեանը այդ բոլորը անում էր նաեւ այն ժամանակ, որ համալսարանի եւ ոչ թէ հայութեան կողմից ֆինանսաւորւած փրոֆեսոր էր. կարծեմ ներդրումը իր հանգստեան կոչւելուց յետոյ իր գործը շարունակելու համար է:

Պէտք է նկատել, սակայն, ամբիոնների որոշ յատկութիւնները: Նախ, ամբիոնի տիրոջ նշանակումը մնում է համալսարանին: Այդ ամբիոնի տէրը ունի խօսքի կատարեալ ազատութիւն, բայց ո՞վ է նշանակւելու ամբիոնի տէր: Այդ հարցի մէջ որոշ դեր ունեն համբաւաւոր հայագէտներ, որոնց կարծիքն է առնուում որոշումը որդեգրելուց առաջ: Բայց վերջին հաշւով համալսարանի կոլեգիային է պատկանում որոշումը: Այսպէս, ուրեմն, Սիւնիի հրաժարւելուց յետոյ Michiganի համալսարանի Ալեք Մանուկեանի անւան հայոց նոր պատմութեան ամբիոնի տէր նշանակւեց Ստեֆանի Փլաքը, որը պատմաբան չէ այլ ազգաբան է, մասամբ այն պատճառով որ այդ համալսարանում կայ պատմութեան եւ ազգաբանութեան բաժանմունքների մէջ սերտ գործակցութիւն եւ իրենց գործին գալիս էր ուրիշի ծախսով յետխորհրդային շրջանով զբաղող մի լաւ ազգաբան ունենալ: Իսկ Columbia համալսարանում հակառակ հանգստեան կոչող ամբիոնի տէր Նինա Գարսոյեանի եւ նրա առաքելների բուռն ջանքերի եւ բազմաթիւ ստորագրութիւններով ներկայացւած դատապարտական նամակի, համալսարանը բարեբախտաբար ամբիոնի տէր նշանակեց նոր շրջանի գրականագէտ Մարկ Նշանեանը:

Կարելոր կէտն այն է, որ յամենայն դէպս հայութիւնը դեր չունի ամբիոնի տիրոջ նշանակման հարցում:

Երկրորդ խնդիրն այն է, որ ամբիոնի տէրը կարող է լինել ծոյլ եւ այդպիսով տասնամեակներով ամբիոնը արդիւնք չտայ: Նա յաւելում չի ստանայ, բայց իր գործը ապահովւած է:

Երրորդ խնդիրն այն է, որ ամբիոնի տերը կարող է զբաղել իր ցանկացած նիւթով: Եթէ, օրինակի համար հայկական գրականութեան մասնագետը կամաց կամաց սկսի հետաքրքրուել չգիտեմ՝ արաբական գրականութիւնով, ամբիոնը կարող է տասնամեակներով նւիրուել արաբական գրականութեան եւ հայագիտական արդիւնք չտալ:

Չորրորդ իրականութիւնը այն է, որ ամբիոնի տերը կարող է հասնել իր ցանկացած եզրակացութիւններին, եւ եթէ դրանք պետութեան կամ թուրքիայի շահերին չհամապատասխանեն, նրանք ճար չունեն. նոյնպէս եթէ հայութիւնը դժգոհ լինի այդ եզրակացութիւններից, ճար չունի:

Այս վերջինը, ի հարկէ, մեզ համար, որ նւիրած ենք գիտութեանը, ինձ թւում է դրական երեւոյթ է: Ցանկալի է մտքի ազատութիւնը: Բայց այն հայերը որ ամբիոնները ֆինանսաւորում են պէտք է իմանան, որ ամբիոնի տիրոջ եզրակացութիւնները իրենց հակակշռի տակ չի ընկնելու:

Ուրեմն ի՞նչ է քաղաքական նպատակներով գիտութեանը նպաստող անհատի կամ հաւաքականութեան ճարը: Դա անկախ ինստիտուտներ կազմելն է: ԱՄՆի յետադիմական ուժերը հարիւրաւոր միլիոններ ծախսել են իրենց մտայնութեանը գիտական տարագաւորում տուող ինստիտուտների վրայ, եւ դրանք պատրաստել են հանրային կարծիք եւ հարիւրաւոր մասնագետներ, որոնք այսօր նշանակուում են իբր նախարար, դատաւոր, եւայլն:

Անկախ ինստիտուտը կարող է ինքը որոշել թէ ումն է աշխատանքի հրաւիրում կամ ում գործն է ֆինանսաւորում. նա կարող է ճշտել ուսումնասիրութեան նիւթերը եւ պահանջել արդիւնք: Ահա թէ ինչու ամբիոններից բացի հայերը կազմեցին նաեւ ինստիտուտներ:

Ի հարկէ ինստիտուտի արդիւնաւէտութիւնը կախած է առնւազն երկու բանից.- բաւարար ֆինանսաւորում եւ ճիշտ ղեկավարում:

Ամբիոնների եւ ինստիտուտների կողքին կան հրատարակութիւնները.- Կոմիտաս ինստիտուտը 1998 թւից հրատարակում է Armenian Forum հանդէպը, որին ակնարկեցի արդէն: ԴՅԴ բիւրոն 1948 թւից հրատարակում էր Armenian Review հանդէպը, որ զբաղւում էր նոր ու նորագոյն շրջանների պատմութիւնով եւ բանասիրութիւնով: Դինգ տարւայ դադարից յետոյ մի-երկու ամիս առաջ լոյս ընծայեց մի համարի: Դայ բարեգործական ընդհանուր միութիւնը հրատարակում է Ararat գրական-գրագիտական եռամսաթերթը: Դայագիտական այն հիմնարկը որ տասնամեակներ առաջ կազմակերպեց Harvard եւ Columbia համալսարանների հայագիտական ամբիոնների ֆինանսաւորումը մերթ ընդ մերթ հրատարակում է Journal of Armenian Studies հանդէպը: Դայագիտութեան միութիւնը, որի մասին շուտով կը խօսեն, հրատարակում է Journal of the Society for Armenian Studies հանդէպը: Վերջին երկուսը զբաղւում են բոլոր ժամանակաշրջանների պատմութեան եւ բանասիրութեան հարցերով: Կայ նաեւ Չան Գրեպպինի կողմից հրատարակուող լեզւաբանական հանդէպը, եւ հայերէնով մերթ ընդ մերթ հրատարակում է «Կամ» մտաւորական հանդէպը:

Ամեն դէպքում, այս բոլորից յայտնի է այն, որ հայագիտութիւնը ԱՄՆում պարունակում է բազմաթիւ տարանջատ կենտրոններ: Այս կենտրոնները աշխատում են իրարուց անկախ եւ մաս են կազմում առանձին-առանձին կառոյցների: Դրանց աւելանում են անհատ գիտաշխատողներ, որոնք հայագիտական ամբիոնների եւ ինստիտուտների մաս չեն կազմում, ինչպէս օրինակ մինչեւ վերջերս Վահագն Տատրեանը, ինչպէս Christopher Walker եւ Ջորջ Բուրնուտեանը: Սրանց շարքին պէտք է դասել նաեւ Դայաստանից առժամայ կամ մնայուն եկած մի շարք գիտաշխատողների, որոնք ընդհանրապէս գալիս են անկախ ԱՄՆի որեւէ հայագիտական կենտրոնից:

Այս տարանջատ կենտրոնների միջեւ հաղորդակցութիւն եւ որոշ չափով համադրութիւն մտցնելու համար կազմւեց Society for Armenian Studies հասարակական կազմակերպութիւնը: SASը միջին արեւելքի մասնագետների

տարեկան ժողովին գիտական զեկուցումներ է հովանաւորում եւ դրան կից տարեկան ժողով է ունենում: Հրատարակում է մի հանդես:

Դժբախտաբար այդ կազմակերպութիւնը բաւարար աշխատանք չի տանում: ԱՄՆում հայագիտութեան լճացած վիճակի լաւագոյն ապացոյցն այն է, որ տարիներով հայագետների միութեան նախագահը, գանձապահը, եւ հանդէսի խմբագիր միեւնոյն անձն է եղել եւ այս անձը հայագետ չի:

Հայագիտութիւնը ԱՄՆում, ուրեմն, չունի համադրման եւ երկարատեւ ծրագրման աշխատող ընթացակարգ: Սրա հետեւեալը պակսում են մի քանի բաներ.-

Նախ՝ նոր պատմութեան վերաբերող փաստաթղթերի մատչելիութեան հարց կայ: Ամեն ասպիրանտ իր հերթին պէտք է գնայ քաղաքից քաղաք, արխիւից արխիւ, նոյն նիւթերին ծանօթանալու համար: Այս հարցը գէթ մասամբ լուծելու համար, մենք ձեռնարկել ենք հայկական ցեղասպանութեան վերաբերող փաստաթղթերի մատենաշար: Հրատարակել ենք 8 հատոր եւ շարունակում ենք:

Երկրորդ՝ ուսանողներին հայագիտութեան մասնագետ դառնալու գծով մղելու համար լուրջ ջանքեր թափող չկայ: Եթէ մէկը դիմի ասպիրանտուրա կարող է ընդունուել: Բայց եթէ տարիներով մէկը չի դիմում, ամբիոնի տէրերը պէտք է ինչ-որ ջանք թափեն սերունդ պատրաստելու գծով: Այդ եւս մի բան է, որ Կոմիտաս ինստիտուտը փորձում է անել, գանազան քաղաքներում եւ համալսարաններում հանդիպումներ կազմակերպելով ու նաեւ ուսանողների համար «ստաժ» կազմակերպելով:

Երրորդ՝ կայ որակի պահպանման հարց: Ի վերջոյ եթէ անկախ ինստիտուտը իր ցանկացածն է հրատարակում, ո՞վ է ստուգում դրա որակը: Այս գծով կայ ճնշում, որը երկու տարբերակ ունի: Թրքական նենգափոխման դիմաց միահամուռ կեցւածք որդեգրելու մղումով, ոմանք լուրջ քննադատութիւնից խուսափում են երբ խնդրոյ առարկայ աշխատանքը վատագոյն ձեւով է պատկերացնում Թուրքիային: Իսկ միւս կողմից կայ երբեմն անհամդուրժողականութիւն, երբ հնուց ժառանգւած ուղղափառութիւնը վերաքննում է:

Չորրորդ՝ կայ կղզիացման հարց: Դա ունի երկու երես: Մէկ երեսը ճիւղը ընդգրկող աւելի լայն ճիւղերի հետ յարաբերութեան հարցն է: Թւում է, որ ԱՄՆում հայագիտութեան ամենամեծ առաւելութիւններից մէկը կարող է լինել առընչակից մասնագիտութիւններ ունեցողների հետ կապի դիւրին հնարաւորութիւնը: Եթէ զբաղւում ես գաղթի հարցով, ասենք Ֆրեզնոյի հայոց պատմութեան հարցով, կարող ես հանդիպել ուրիշ տեղերից գաղթի մասին ուսումնասիրութիւն անողներին: Եթէ զբաղւում ես հայկական ցեղասպանութեան խնդրով, կարող ես կապ ունենալ ուրիշ ցեղասպանութիւնների պատմութիւնով զբաղւողների հետ: Այդ լինում է եւ ինչպէս ասացի հզօրութեան կէտ է: Կարելի է, ի հարկէ, աւելին անել:

Մենք, Armenian Forumի խմբագիրներս, կարելոր նկատեցինք, որ հայկական ցեղասպանութեան պատմութիւնը ինտեգրացւի ոչ միայն ցեղասպանութիւնների պատմութեան մէջ այլ նաեւ ու մանաւանդ Թուրքիայի պատմութեան մէջ: Դա ի հարկէ անհրաժեշտ է, բայց Թուրքիայի պատմագրութեան անառողջ վիճակի պատճառով շատ գործնական չի եղել: Մենք կարողացանք, սակայն, յարաբերութիւն ստեղծել Թուրքիայի պատմութիւնով զբաղւող որոշ պառկեշտ ոչ-շովեն մասնագետների հետ, որոնք չեն հերքում ցեղասպանութեան փաստը եւ քաջութիւնը ունեն դրա մասին խօսելու: Կազմակերպեցինք գրաւոր վեճ, Ռոնալդ Սիւնիի մի վիճարկելի յօդւածի մասին: Այդ շատ շահեկան վեճին մասնակցան Վահագն Տատրեանը, Էնզիմ Աքարլըն, եւ Սելիմ Դերինգիլը:

Ինտեգրացման այս գործը պէտք է շարունակելի, ոչ իբրեւ ազգամիջեան բանակցութիւն, այլ իբր գիտական ուսումնասիրութիւն: Երկու-երեք ամիս առաջ «Ազգ»ի մէջ կարդացի մի վերլուծում, ըստ որի այս կարգի հանդիպումները նախապատրաստում էին թուրք-հայ հաշտութեան տխրահռչակ յանձնաժողովի գործունէութիւնը: Դա սխալ է: Գիտական աշխատանք տանել այն անձի հետ որ ընդունում է պատմական փաստերը բնական եւ դրական մի բան է: Ազգի անունով

խօսելու յաւակնութեամբ բանակցել մարդկանց հետ, որոնք հերքում են իրականութիւնները, դա այլ բան է, որը միայն կոպիտ ձեւով կարելի է գնահատել: Թացն ու չորը չխառնենք իրար հետ:

Ասացի, որ կղզիացումը ունի երկու երես: Երկրորդ երեսը Հիւսիսային Ամերիկայից դուրս աշխատող հայագետների հետ յարաբերութիւնների խնդիրն է: Ինձ համար բոլորովին անհասկանալի է հայագիտութիւնը ըստ գիտաշխատողի բնակավայրի բաժանելու մօտեցումը: Գուցէ անցեալին գործնական նկատառումներով հասկանալի էր, բայց Internetի ու faxի ու համեմատաբար մատչելի թռիչքների այս օրերին դժուար է հասկանալ: Կոմիտաս ինստիտուտը յաղթահարել է Ատլանտեան օվկիանոսի անջրպետը, եւ հանգիստ աշխատում է դրա երկու ափերի վրայ էլ: Բայց Հայաստանում եւ ԱՄՆում գործող հայագետների կապը մնում է տկար եւ ի հարկէ հիմա մթնոլորտը լարած է:

Սա ինձ բերում է իմ խօսքի եզրափակիչ մասին:

Այն հանդիպման ընթացքին որին ակնարկեցի խօսքիս սկզբում, Մարկ Նշանեանը հարցը այսպէս դրեց.- հայագիտութիւնը ու՞մ համար. ոչ ցուցահանդէսը դիտելու եկած օտարների համար, այլ մեզ համար, այսինքն սփիւռքի համար եւ ընդհանրապէս հայութեան համար: Մենք ենք, որ պիտի ճշտենք այն հարցերը, որոնց պատասխանները իմանալը մեզ շահագործում է: Եթէ մենք ենք ֆինանսաւորում, պէտք է պայմանները ստեղծենք, որպէսզի այդ հարցերի պատասխանները ստանանք:

Այս մօտեցումը մեկնաբանելով, օրինակի համար, մենք հայագիտութիւնը աւելի ընդարձակ կամ ընդգրկիչ ձեւով ենք սահմանում քան անցեալին էր ընդունւած. նրա մէջ ենք ներառում Հայաստանի տնտեսութիւնը, առողջապահութիւնը, անվտանգութիւնը, եւ նման ասպարէզներ, սփիւռքի մէջ ինքնութիւնը, եւ թէ՛ Հայաստանում թէ՛ սփիւռքում հասարակական եւ այլ կառոյցների կազմաւորման ու զարգացման հարցերը: Եթէ նայէք Armenian Forumը, կը տեսնէք դրա ապացոյցը:

«Հայագիտութիւնը հայութեան համար» բանաձեւումը, սակայն, չպէտք է մեկնաբանել իբր առարկայութիւնից հեռանալու հրաւեր: Հայութիւնը կարող է եւ պէտք է որոշի իր կողմից ֆինանսաւորւած հաստատութիւններում քննարկուող հարցերը, բայց չի կարող որոշել դրանց պատասխանները: Եթէ պահանջենք նախապէս ճշտւած պատասխաններ, լինի դա յանուն ազգային անվտանգութեան կամ ուրիշ բանի, մենք կը դադարենք գիտաշխատողներ լինելուց ու կը դառնանք պրոպագանդիստներ:

Իրականութիւնն այն է, որ ոչ-առարկայական աշխատանքները վնասում են ոչ միայն հեղինակի հեղինակութեանը այլեւ սպառողին, լինի նա դաստիարակող երիտասարդ թէ գիտական աշխատանքի հիման վրայ քաղաքականութիւն որոշող թէ քաղաքական գործ տանող:

Մեր, գիտաշխատողներիս, պարտականութիւնն է թէ՛ ԱՄՆում թէ՛ այլուր, լինել աջալուրջ, որ մնանք մեր կոչումի վրայ:

Շնորհակալութիւն:

Հարց ու պատասխան

Հարց տրւեց թէ Վինսէնթ Լիման ինքը եւ ԱՄՆում աշխատող հայագետները՝ ընդհանրապէս, կարդո՞ւմ են Հայաստանում տպւած գրքերն ու յօդւածները, թէ ԱՄՆում աշխատող հայագետներից քանի՞սն են հայ, եւ թէ նրանք որքանո՞վ հայերէն գիտեն:

Լիման պատասխանեց որ ինքը հետաքրքրւում է նորագոյն շրջանով եւ ժամանակակից հարցերով, եւ հետեւում է Հայաստանի տնտեսութեան, հասարակական կեանքին, իրաւական համակարգին, եւ նման հարցերին անդրադարձող հրատարակութիւնների. իսկ երբ «Պատմա-բանասիրական հանդէս»ը ձեռքն է հասնում, կարդում է գրախօսականները եւ իրեն հետաքրքրող որոշ յօդւածներ: Ինչ վերաբերում է ուրիշներին, նա ասաց, որ իւրաքանչիւր

գիտաշխատողի համար դա պետք է իմանալ նրա հրատարակած գործերի տողատակի արձանագրություններից: Նոյնպես, թեև ի հարկե բոլորը հայերեն գիտեն, իւրաքանչիւրի հայերենի մակարդակի մասին կարելի է գաղափար կազմել իր հրատարակած գործերից: Ինչ վերաբերում է ազգային պատկանելիութեան հարցին, Լիման ասաց. «Ես օգտակար չեմ համարում գիտնականներին ըստ ազգութեան դասել»:

Հարց տրւեց, թէ սփիւռքահայերը ինչու իրենց ներդրումները չեն ուղղում Հայաստանի հայագիտական համակարգին, ուր, ըստ հարց տուողին, աւելի բարձր որակի գործ կարելի է ստանալ աւելի քիչ ծախսով: Լիման ասաց, որ ամերիկահային հայագիտութեան դրամ տալու մղող իր նշած երեք կետերն էլ պահանջում են տեղական աշխատանք. այսպէս, հայը ամերիկացուն ծանօթացնելու նպատակը իրագործելու համար անհրաժեշտ է ԱՄՆի չափանիշներով հեղինակութիւն ունեցող մասնագէտի կողմից լաւ անգլերենով պատրաստուած նիւթ. հայապահպանման համար պետք են խնդրոյ առարկայ տեղում դասաւանդող դասատուներ. իսկ քաղաքական պայքարի համար անհրաժեշտ են դարձեալ տեղի չափանիշներով հեղինակութիւն ունեցող, տեղի լեզւին տիրապետող, տեղի քաղաքական բեմերում արտայայտուող մասնագէտներ: Այս ազդակներին, ըստ Լիմանի խօսքին, աւելանում է այն երեւոյթը, որ ԱՄՆի համալսարանների կազմում աշխատում են հանգանակութիւնով զբաղող ամբողջ աշխատակազմներ, որոնք հմտօրէն դիմում են տւեալ համալսարանի ընթացաւարտներին եւ համալսարանի մօտ ապրող ունեւորներին՝ ներդրումներ ստանալու համար: Պատահական չէ, որ, օրինակի համար, Ալեք Մանուկեանը իր բնակած Michigan նահանգի համալսարաններից մէկին է նւիրել երկու ամբիոն կազմելու դրամը:

Լիման իր պատասխանը եզրափակեց, ասելով, որ ներդրողներին պետք է հասկացնել ու համոզել, որ իրենց հետապնդած նպատակները դժւար թէ իրագործեն առանց այն որ Հայաստանում գոյութիւն ունենայ առողջ ու աշխոյժ հայագիտական համակարգ եւ գոյութիւն ունենան այդ համակարգի եւ ԱՄՆում աշխատող կենտրոնների միջեւ սերտ կապեր:

Աւեց, որ Լիմանի խօսքերը հաստատում են Հայաստանի հայագիտական շրջանակներում տարածուած այն համոզումը, որ հայագէտները ԱՄՆում աշխատում են սիրողական մակարդակի վրայ: Լիման ասաց, որ իր խօսքերը կառոյցի եւ ձեւի մասին էին միայն. նա պնդեց, որ ԱՄՆում բազմաթիւ անհատ հայագէտներ չափազանց լուրջ եւ արժէքաւոր աշխատանք են տանում իրենց առանձին-առանձին համալսարաններում, կենտրոններում, հանդէսներում, եւայլն: Նա շեշտեց, որ արհամարհական մօտեցում որդեգրելը սխալ է եւ սխալ գործ են անում նրանք, լինեն Հայաստանում թէ ԱՄՆում, որ արհամարհում են իրենց գործակիցների գիտական աշխատանքը:

Հարց տրւեց, թէ ցեղասպանութիւնների համեմատական պատմութեան գծով, որքանով է խօսւում կարմրամորթների բնաջնջման մասին: Լիման պատասխանեց, որ Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքին տեղի ունեցած ցեղասպանութիւնն է ստանում ուշադրութեան առիծի բաժինը: Սակայն Armenian Forumի մէջ հրատարակւել է քրդերի դէմ Թուրքիայի կողմից կազմակերպուած ցեղասպանութեան մասին մի յօդուած, որի մէջ Ամերիկայի բնիկների ցեղասպանութիւնը լուրջ ուշադրութեան է արժանանում:

Հարց տրւեց, թէ Լիման անձամբ ինչ կարծիք ունի երկու հարցերի մասին, որոնք Հայաստանի եւ ԱՄՆի հայագէտների միջեւ սուր տարակարծութեան նիւթ են. առաջինը՝ հայերը հայկական լեռնաշխարհում բնիկ են թէ՞ եկւոր. երկրորդը՝ Խորենացին, Եղիշէն, եւ միւսները հինգերորդ դարի պատմիչներ են թէ՞ ստախօսներ: Լիման ասաց, որ հնագէտ չլինելով չի կարող պատասխանել այդ հարցումներին. բայց կարող է ասել այն, որ այդ հարցերը գիտական հարցեր են եւ ոչ թէ ռազմավարական կամ քաղաքական նշանակութիւն ունեցող հարցեր: Նա աւելացրեց. «Աւելի թրքամէտ ու հայատեաց մօտեցում չի կարող լինել քան այն, որ

ճախահայերը եկուր լինելու պարագային ինչ-որ կերպ արդարանում է հայկական ցեղասպանութիւնը: Ոչինչ չի կարող արդարացնել մի ժողովրդի բնաջնջումը:»
 Լիման աւելացրեց, որ եթէ հայերը «1912 թւին Ափրիկէի ծայրից եկած, հասած լինէին Հայաստան», դարձեալ ոչինչով, ոչ մէկ չափով կարդարանար առանց հացի ու ջրի անապատներում բռնագաղտի ենթարկել ու մահացնել մի ժողովուրդ:

Հարց տուողը ասաց, որ ցեղասպանութիւնը արդարացնելու խնդիր չկայ: Լիման մատնանշեց, որ Արմէն Այվազեանը, «Հայաստանի պատմութեան լուսաբանումը ամերիկեան պատմագրութեան մէջ» իր գրքի 117րդ էջում, գրում է, «եթէ հայերը եկվորներ են Հայկական լեռնաշխարհում և փոխարինելու են եկել ինչ-որ այլ ժողովուրդների, ապա մեկ այլ պատմական ժամանակահատվածում այդ տարածքից նրանց օտարացումը դիտվելու է որպէս գրեթէ բնականոն երևոյթ:»
 Լիման կրկնեց, որ հայերի ծագումնի հարցը, ինչպէս եւ պատմիչների հիմնգերող դարի պատկանելիութեան հարցը, գիտական հարցեր են եւ ոչ քաղաքական: Այս տեսակէտը հաստատեց Ակադեմիայի գիտաշխատողներից մէկը, նշելով որ հայրենի հայագիտութեան տիտաններից ոմանք եղել են Հայաստանում այսօր մերժող տեսութիւնների հեղինակների շարքին:

Պատմութեան ինստիտուտի տնօրէն եւ նիստի ղեկավար՝ ակադեմիկոս Հրանտ Աւետիսեանը ասաց, որ ԱՄՆում Հայաստանի գիտաշխատողների հանդէպ անհանդուրժողութեան ապացոյց է այն, որ Լիման 10 տարի առաջ մի քանի յօդածներ է տարել Հայաստանից Armenian Review հանդէսի մէջ հրատարակելու համար եւ դրանք լոյս չեն տեսել: Լիման ասաց, որ Հայաստանի գիտաշխատողների հանդէպ իր յարգանքի ապացոյցն է այն, որ 10 տարի առաջ իսկ եկել է իրենցից յօդած խնդրելու, իսկ դրանց չհրատարակելու պատճառն այն է, որ Armenian Reviewն անփող՝ տարիներով ընդհանրապէս լոյս չի տեսել:

Ակադեմիկոս Հրաչիկ Սիմոնեանը շնորհակալութիւն յայտնելով Լիմային մի տասնամեակ առաջ իր յօդածներից մէկը Armenian Review հանդէսում հրատարակելու համար, ասաց, որ համաձայն է Լիմայի նշած կէտերին: Ապա ասաց, որ ներկայ պայմաններում անհրաժեշտ է պատմութիւնը գրել այնպէս, որ ազգային շահերին նպաստի: Նա յայտարարեց, որ թուրք պատմաբանները հայերի եկուր լինելու տեսութիւնը օգտագործում են ցեղասպանութիւնը արդարացնելու համար եւ ուրեմն պէտք է խուսափել այդ տեսութիւնից: Նա ցաւ յայտնեց, որ անցեալին Հայաստանի նշանաւոր պատմաբաններ որդեգրել են այդ թեզը, քանի որ դրա հետեւանքով Հայաստանից դուրս այդ տեսութեան պաշտպանների «լեզուն երկար է»: Նա կարծիք յայտնեց, որ այդ նշանաւոր պատմաբանները ուզում էին հայերին մօտեցնել եւրոպացիներին եւ դրա համար որդեգրեցին այդ տեսութիւնը: Սիմոնեանը քննադատեց Բէյրութի Հայկազեան համալսարանի պատմութեան բաժանմունքի տնօրէն՝ պրոֆեսոր Արա Սանճեանին, ասելով որ նա Արմէն Այվազեանի վերոյիշեալ գրքի իր գրախօսականի մէջ հերքել է հայկական ցեղասպանութեան փաստը:

Լիման պատասխանելու առիթ չունեցաւ: Սակայն նա իր ելոյթից յետոյ նշեց, որ ակադեմիկոս Սիմոնեանի խօսքը «լաւագոյնս արտացոլում էր այն մօտեցումը, որից պէտք է խուսափի իր կոչումին արժանի պատմաբանը: Սիմոնեանը պատւէր տւեց, թէ պատմաբանները ինչ եզրակացութիւնների պէտք է յանգեն. նա այնքան բնական էր համարում այդ մօտեցումը, որ նոյն մօտեցումը վերագրեց անցեալի մեծ պատմաբաններին, ասելով որ նրանք էլ առաջնորդում էին ոչ թէ փաստերով այլ իրենց նախընտրած եզրակացութիւններով. եւ նա անհիմն զրպարտութիւնով աշխատեց սեւացնել իր մօտեցումը մերժող՝ Արա Սանճեանի անունը: Ուր այսպիսի հակագիտական ճնշում կայ, անկասկած լուրջ պատմաբանի համար դժուար է աշխատել:»

Փակման խօսք ասելով, ակադեմիկոս Աւետիսեանը նշեց, որ անհրաժեշտ է Հայաստանի եւ ԱՄՆի հայագէտների միջեւ գործակցութիւնը, ԱՄՆի մէջ հրատարակւած գործերը պէտք է գնահատել գիտական տւեալներով եւ պատասխանել դրանց գիտական ձեւով, խուսափելով սուր դիրքորոշումներից: